# Հայաստանի դիմակայունության եւ աճի ծրագիր



2024թ. ապրիլ

ԵՄ-ն եւ Հայաստանը ներկայացնում են իրենց տեսլականը նոր, հավակնոտ Գործընկերության օրակարգի շրջանակում:

Ի աջակցություն այդ գործընկերության՝ ԵՄ-ն ներկայացնում է **Հայաստանի 2024-2027 թթ. դիմակայունության եւ աճի ծրագիրը՝ 270 միլիոն եվրո բյուջեով:**

**200 միլիոն եվրո դրամաշնորհային օժանդակություն**

**70 միլիոն եվրո դրամաշնորհային ֆինանսավորում՝** կապի, դիմակայունության եւ բիզնեսի զարգացման ոլորտներում **ներդրումները խթանելու համար**

Դիմակայունության եւ աճի ծրագիրը կենտրոնանալու է հետեւյալ առաջնահերթությունների վրա.

## Հայ հասարակության դիմակայունության բարձրացում

- **Ժողովրդավարական բարեփոխումներին, մարդու իրավունքներին եւ օրենքի գերակայությանն** ուղղված աջակցության շարունակություն:
- Աջակցություն **հմտությունների եւ զբաղվածության ոլորտում բարեփոխումներին** եւ ներդրումներին:
- Աջակցություն **տեղահանված անձանց երկարաժամկետ ինտեգրմանը՝** ներառյալ բնակարանային եւ զբաղվածության ապահովման հարցերում՝ միջազգային գործընկերների հետ միասին:





## Կապի եւ գործարարության ուղղությամբ ներդրումների իրականացում

- Աջակցություն Հայաստանի **էներգետիկ դիվերսիֆիկացմանը եւ անվտանգությանը**՝ վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրումների ավելացման եւ Վրաստանի հետ հաղորդման ցանցի հզորացման միջոցով:
- **Տրանսպորտային ենթակառուցվածքներում** ներդրումների մոբիլիզացում՝ զարգացնելու Հայաստանի՝ որպես տարածաշրջանային լոգիստիկ եւ տրանսպորտային հանգույցի դերը:
- **Գործարարության զարգացման** ուղղությամբ ներդրումների իրականացում՝ ուղղված նոր շուկաներ մուտք գործել ձգտող տեխնոլոգիական ընկերություններին, ստարտափներին եւ ՓՄՁ-ներին:
- Տնտեսական եւ ներդրումային ծրագրի շրջանակներում կապի ոլորտում ներդրումների մոբիլիզացում եւ աջակցություն Հայաստանի մասնակցությանը տարածաշրջանային նախագծերին, մասնավորապես՝ **Սեւծովյան էլեկտրահաղորդակցման մալուխին:**

## Հայաստանի մերձեցում Եվրոպայի հետ



- Օգնություն **վարչական մարմինների ու հաստատությունների հզորացմանը** եւ աջակցություն իրավանորմատիվային պահանջների համապատասխանեցմանը՝ փորձագետների եւ տեխնիկական աջակցության միջոցով (ԹԱՅԵՔՍ, Թվինինգ):
- Աջակցություն **ավիացիոն եւ միջուկային անվտանգությանը:**
- Աջակցություն Հայաստանի **արտահանման դիվերսիֆիկացմանը** եւ նոր շուկաներում հայկական արտադրանքի առաջմղմանը:



© Adobe Stock

© Եվրոպական միություն, 2024
Սույն փաստաթղթի վերաօգտագործումը թույլատրվում է՝ համապատասխան աղբյուրի վկայակոչման եւ կատարված բոլոր փոփոխությունները նշելու պայմանով (Creative Commons հեղինակության վերագրման 4.0 Միջազգային արտոնագիր): ԵՄ-ին չպատկանող տարրերի ցանկացած տեսակի օգտագործման կամ վերարտադրության համար հնարավոր է անհրաժեշտ լինի թույլտվության համար դիմել անմիջապես համապատասխան իրավատիրոջը: Բոլոր պատկերների հեղինակային իրավունքը պատկանում է Եվրոպական միությանը, եթե այլ բան նշված չէ:

Լուսանկարներ: Եվրոպական միության հրատարակչական գրասենյակ, 2024

Print ISBN 978-92-68-13921-9 doi:10.2775/936198 NA-02-24-413-EN-C
PDF ISBN 978-92-68-13909-7 doi:10.2775/739442 NA-02-24-413-EN-N